ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մարտի 6-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ պայմանագրում 2018 թվականի սեպտեմբերի 27-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Պայմանագրի և տեխնիկական բնութագրի պայմանների համապատասխանեցում:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի հավելված N 1-ում կատարվել է փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	2018 թվականի մարտի 6-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

06.03.2018 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ գնման պայմանագրի

ք. Երևան 27 սեպտեմբերի 2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գողթն>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 06.03.2018 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի հավելված N 1-ում <<3 300 000>> թիվը փոխարինել <<294 500>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Գողթն>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Վ. Վաղարշյան 14-4
կառավարական տուն 3	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1570023024930100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00010182
Հ/Հ 900011019164	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Հովակիմյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ